

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորատի**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
15 Մարտի 2021 թվականի

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսումնական գործընթացը հեռավար կազմակերպելու մասին

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորատը

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային համաճարակի վարակվածության դեպքերի աճը և Համալսարանում վարակված ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ցուցանիշները, վարակման դեպքերը կանխարգելելու նկատառումներից ելնելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսումնական գործընթացի և գրասենյակային աշխատանքի կազմակերպման գործընթացներում կատարել հետևյալ ժամանակավոր փոփոխությունները.

1. Սույն թվականի մարտի 17-ից մինչև ապրիլի 5-ը ուսումնական գործընթացը կազմակերպել zoom հարթակում հեռավար հիմունքներով՝ ըստ հաստատված դասացուցակի (առանց դասացուցակների փոփոխության), բացառությամբ հեռակա բակալավրիատի որտեղ մարտի 17-19-ի դասերը կկազմակերպվան անցանց (ոչ հեռավար):
2. Վերականգնվող կամ շարժունություն ունեցող ուսանողների տարբերությունների հանձնումը կազմակերպել առկա (ոչ հեռավար) հիմունքներով:
3. Հեռակա մագիստրատուրայի քննությունները կազմակերպել անցանց (ոչ հեռավար):
4. Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին ակադեմիական խմբերի ավագներին տրամադրված կորպորատիվ zoom փաթեթների հաշվին դասախոսներին տրամադրել դասացուցակային գրաֆիկին համապատասխան պլանավորված դասախոսությունների և սեմինար պարապմունքների zoom տեսակոնֆերանսների հղումները՝ սկսած մարտի 17-ից:

5. Հանձնարարել դասախոսներին և էլեկտրոնային սարքավորումների սպասարկման և ծրագրային ապահովման բաժնին zoom հարթակում հեռավար կերպով անցկացվող դասընթացների տեսաձայնագրությունները զետեղել moodle հարթակում տվյալ խմբերի համար բացված մոդուլներում:
6. Հանձնարարել ֆակուլտետների ղեկաններին ամբողջականացնել էլեկտրոնային մատյանները:
7. Հանձնարարել ամբիոնների վարիչներին մինչև մարտի 17-ը ուսանողների հաճախումների և ընթացիկ ակտիվության գրանցումները թղթային մատյաններից արտածել նաև էլեկտրոնային մատյաններում:
8. Հանձնարարել ամբիոնի վարիչներին մարտի 17-ից ապրիլի 5-ի հեռավար դասերին ուսանողների հաճախումների և ընթացիկ ակտիվության հաշվառումն իրականացնել էլեկտրոնային մատյաններում:
9. Հանձնարարել ամբիոնների վարիչներին ամբիոններում սահմանել հերթապահություն՝ վերականգնվող և շարժունություն ունեցող ուսանողների տարբերություններն ընդունելու համար:
10. Հանձնարարել ստորաբաժանումների ղեկավարներին ստորաբաժանումների աշխատանքը կազմակերպել հերթափոխերով՝ 1 աշխատասենյակում յուրաքանչյուր աշխատանքային օր 3 աշխատակցից ոչ ավել ներկայությամբ:
11. Հանձնարարել վարչատնտեսական և կազմակերպական դեպարտամենտի տնօրենին հսկողություն սահմանել վարչական անձնակազմի ջերմաչափման, հակահամաճարակային կանոնների խստիվ պահպանման ուղղությամբ:
12. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:
13. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ռեկտոր՝

Դ. Ռ. Գալոյան

2021 թ. Մարտի 15

Երևան